Ջալլադը, որ խիստ հազիւ անգամ խօսակցութեան մէջ մտնելու սովորութիւն ունէր, դարձաւ դէպի հալածեալը, հարցնելով.

— Դուք միայն գրքե՞ր էք տարածում:

— Ո՛չ, յարմար տեղերում նաեւ քարոզում եմ տիրոջ խօսքը, կամ ինքս կարդում եմ Աւետարանը, իսկ գիւղացիք լսում են, — պատասխանեց նա հեզութեամբ:

— Շա՞տ լսողներ ունէք:

— Այդ կողմերում չէ կարելի ասել՝ թէ շատ, քահանաները գրգռում են ժողովրդին մեր դէմ: Դուք ձեր աչքով տեսաք, եթէ երեխաները այդպէս են վարւում, նրանց հայրերը ի՞նչ կը լինեն:

— Բայց, որքան ինձ յայտնի է, դուք էլ ձեր կողմից ոչ սակաւ առիթներ էք տալիս ձեզ հետ այդպէս վարուելու:

— Ի՞նչ առիթներ:

— Լուսաւորչականներին հեթանոս էք կոչում, նրանց սրբութիւնները անարգում էք, մեծ պահոց օրերում բաւական չէ, որ դուք պաս էք ուտում, այլ կերած մածունի մի մասն էլ ձեր մօրուքների ու բեխերի վրայ էք քսում եւ այնպէս դուրս էք գալիս լուսաւորչականների մօտ, որ նրանց բարկացնէք: Չէ՞ որ ձեր տարածած աւետարանը արգելում է այս տեսակ ցոյցեր, պատուիրում է չվշտացնել եղբօրը:

— Նրանք մեր եղբայրները չեն:

— Եթէ դուք նրանց ձեր եղբայրները չէք համարի, դրանով աւելի պատճառ կը տաք ձեզ հալածելու: Եւ միթէ՞ դուք եւ նրանք մի հօր որդի, մի ազգի զաւակներ չէք:

Մէջ մտաւ Թաթոս եղբայրը, դարձեալ աչքերը խփելով եւ աջ ձեռքը դէպի սուրբ գրքերի տարածողը մեկնելով, որ թոյլ տա իրեն խօսելու:

— Մենք եղբայրներ կոչում ենք միայն աւետարանով մեզ հետ միացողներին, ինչ ազգից որ լինէին նրանք, իսկ հեթանոսները մեր եղբայրները չեն, թէեւ մէկ մօրից ծնուած լինէինք:

Ասլանը լուռ վեր կացաւ, ցած իջաւ սրահից եւ դիմեց դէպի պարտէզի առջեւից հոսող առուակը: Այնտեղ նստեց նա խոտերի վրայ: Ես գնացի նրա մօտ:

— Խնդրեմ իմ վերարկուն այստեղ բեր, — ասաց նա վշտացած ձայնով:

Երբ վերարկուն տարայ, նա փաթաթուեցաւ, պառկեց խոտերի վրայ:

— Կամենում ես քնե՞լ, — հարցրի նրանից: